

ԿԵՐԵՆԻ «ՋՐԱԿԱՆ» ՂԱՄԲԱՐԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Մ. ք. ա. VII-VI դդ. Հայաստանի հարավարևելյան շրջանների նյութական մշակույթը աչքի է ընկնում մի շարք յուրահատկություններով, բայց միաժամանակ մի շարք զուգահեռներ ունի նույն շրջանի Իրանի նյութական մշակույթի հետ: Այսպիսի մանրությունների ենք հանդիպում նաև Կերենի դամբարանադաշտի պեղումների արդյունքները ուսումնասիրելիս: ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Կերեն գյուղը գտնվում է Կապան քաղաքից 12 կմ հարավ-արևելք: Դամբարանադաշտը ընկած է գյուղից մոտ 0,5 կմ հարավ-արևմուտք և ձգվում է մոտ 800 մ ջրբաժանի երկայնքով՝ ճանապարհի աջ և ձախ կողմերում տարածվող անտառով, մինչև հարևան բլրի գագաթը: 2004 թվականից այստեղ հետազոտություններ է կատարում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (հնագետ՝ Ա. Գնունի, երկրաբան՝ Գ. Խաչատրյան): 2004 թ. աշնանային պեղաշրջանի ընթացքում նշված դամբարանադաշտում գտնվեց մի դամբարան (թիվ 64), որի նյութերը հարուստ տեղեկություններ են պարունակում Հայաստանի մ.թ.ա. VII-VI դդ. նյութական մշակույթի մասին:

Դամբարանը հյուսիս-հարավ ուղղվածությամբ, բազալտի ընտանիքի քարաբեկորներից ուղղանկյուն հատակագծով շարված քարարկղ է, որը գտնվում է ջրբաժանի արևելյան լանջին: Կառույցի արևմտյան պատը եռաշար է, իսկ արևելյանը՝ մեկշար: Այսպիսով, թեք լանջին տեղադրված կառույցը քողարկված էր: Հատկանշական է նաև, որ արևելյան պատի հարավային հատվածում վերջին քարը բացակայում էր: Կառույցի երկարությունը 3 մ է, իսկ լայնությունը՝ 0,8 մ:

Դամբարանի հյուսիսային (ավերված) հատվածում հայտնաբերվեցին երեք «արարողակարգային» գավաթ-խնկարկման անոթներ (նկ. 5-6), ուռուցիկ իրանով մեծ սափոր (նկ. 9) և հատույթում եռանկյուն բռնակով փոքր բաժակ (նկ. 11): Այս հատվածի գտածոների մեջ պետք է առանձնացնել կոպիտ «աղաման»-անոթը, որը չէր կարող օգտագործվել ոչ մետաղագործությանն առնչվող գործընթացներում (անոթը շատ վատ էր թրծված, իսկ կտրրվածքում բացակայում էին մետաղի հետքերը), ոչ էլ որևէ մածուցիկ նյութի պահպանման համար. թերևս նախատեսված է եղել սորուն նյութի պահպանման համար*:

Դամբարանի հյուսիսային հատվածում առկա են խարույկի հետքեր, ինչպես նաև այրված ոսկորների մի քանի բեկոր: Դամբարանի կենտրոնական հատվածում in situ վիճակում հայտնաբերվեց լավ թրծված կավից պատրաստված տղամարդու անգոբապատ սնամեջ արձանիկ (նկ. 1): Արձանի վզին և ձեռքերին կետային եղանակով կատարված զարդանախշ է: Գլխատին նույն եղանակով նշված է ճակատակալը: Կրծքին մանյակ է, ուսին՝ լանջագոտի, գոտկատեղին՝ գոտի: Թեթևակի նշված է ֆայր, քիչ բարձր՝ եղևնաձև զարդանախշ: Արձանիկի աջ ձեռքում գավաթ է: Արձանը գրկում է «կեռնոս» անոթը (նկ. 3): Արձանի աջ թևին ընդիուպ հաված էր լրակերպ-կենդանակերպ անոթ (նկ. 3): Կեռնոսի դիմաց՝ արևելյան պատի մոտ, տեղադրված էին մի քանի սափոր (նկ. 2,6,10), երկու միակցված քաս (նկ. 8), քրե-

* Հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում ԵՊՀ հնագիտության գ/հ լաբորատորիայի աշխատակից Զ. Նավասարդյանին համապատասխան ուսումնասիրություններ կատարելու և փորձագիտական եզրակացություն տալու համար:

ղան, ինչպես նաև կենդանակերպ (խոյակերպ) բռնակներով սափոր^{**}: Դամբարանի հարավային հատվածում գույքը բացակայում էր: Դամբարանում գույքի տեղադրման առանձնահատկությունները և արևելյան պատի հարավային հատվածում վերջին քարի բացակայությունը թույլ են տալիս ենթադրելու, որ թաղման արարողակարգի ընթացքում նյութը տեղադրվել է հյուսիսից հարավ ուղղությամբ:

1. *Արձանիկ*: Չնով արձանիկը դասվում է ավանդական-պայմանական տիպի ստեղծագործությունների թվին (Բ. Առաքելյանի բնորոշումը), որոնք բնութագրվում են հարթ դեմքով, ելուստ ունեցող ճակատով և քթով: Աչքերը և բերանը նշված են խորը անցքերով և ճեղքով¹: Այս արձանիկին ամենամոտ զուգահեռը հայտնաբերված է Կապան քաղաքից ոչ հեռու (պահպանվում է Կապանի երկրագիտական թանգարանում): Սակայն գավաթով տղամարդկանց արձանները առավել տարածված են եղել Իրանում (Լուրիստան, Մարլիկ-թեփե)²: Լանջակապը նշված է երկու զուգահեռ անփույթ փորագրված գծերով, որոնց միջև տեղադրված են դրոշմի եղանակով կատարված սոյաք նշաններ: Ամենայն հավանականությամբ քանդակագործն այդպես է պատկերել կաշվե լանջակապը, որի վրա կարված էին մետաղական վահանակները: Բացառված չէ, որ նույն կերպ կարող է մեկնաբանվել լանջակապի մման պատկերված գոտու ստորին հատվածում կետային եղանակով կատարված զարդանախշը: Մ.թ.ա. I հազ. Հայաստանի հուշարձաններում լանջակապը զարդարում է Ջարջառիսից և Կապանից գտնված արձանիկների ի-

րանը, Իրանում՝ Լուրիստանից գտնված արձանիկը: Լանջակապը զարդարում է մաև Թուփրակ-կայեի ուրարտական սֆինքսի իրանը³: Արձանիկի աջ ձեռքում պահվող գավաթն ունի կոմաձև, քիչ կորացած իրան և փռված շուրթ, որով այն նմանվում է մ.թ.ա. VI-V դդ. տարածված դիտոններին⁴: Արձանի ձեռքերի ենթադաստակները կետազարդ են: Այս զարդանախշը կարող է մեկնաբանվել որպես ապարանջան, սակայն բացառված չէ, որ դա զինվորի պաշտպանական սպառազինության բաղադրատարր է:

2. *Կեռնուք* ուռուցիկ իրանով անոթ է, որի վերին հատվածում տեղադրված է երկրորդ փողը: Դրան համեմատաբար ավելի մման են Տանգավերի դամբարանադաշտից գտնված անոթը և Պերսոպոլիսից գտնված կեռնուք: Հատկանշական է, որ Տանգավերից պեղված անոթն ունի խոյակերպ բռնակ: Իրանական նյութն (խուրվին) ակներև է դարձնում կեռնու-կենդանակերպ քանդակ և կեռնու-մարդակերպ քանդակ կապը⁵:

3. *Ցլակերպ անոթ*: Կենդանակերպ անոթները հայտնի են Հայաստանի (Ագարակ, Խրտանոց, Մուսիերի, Երևան, Խնածախ, Տանգավեր, Շիկահող), Վրաստանի (Թրեխ), Ադրբեջանի (Մինգեչաուր, Թալիշ), Իրանի (Խուրվին, Սիալկ, Մակու) հուշարձաններից⁶:

Այսպիսով, թաղման գույքի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրելու, որ դամբարանի կենտրոնում գտնվող կեռնուք ամբողջ դամբարանի խորհրդանշական կենտրոնն է, որի շուրջ խմբավորում էին այլ իրերը:

^{**} Դամբարանային գույքը վերականգնվել և գրչանկարվել է Պատմաճակարկային ժառանգության գ/հ կենտրոնի լաբորատորիայում: Վերականգնող՝ Հ. Հակոբյան, գրչանկարը՝ Թ. Հմայակյանի:

¹ Տե՛ս Բ. Н. Аркаелян, Очерки по истории искусства древней Армении, Ер., 1976, էջ 14-16:

² Տե՛ս E. Nergahban, Some objects from Marlik. Journal of Near Eastern Studies, 1965, № 4, էջ 17:

³ Տե՛ս С. Есаян, Скульптура древней Армении, Ер., 1981, աղ. 47, 51 (3); Б. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962, աղ. II; R. Girshman, Iran, London, 1954, pl. 6:

⁴ Տե՛ս R. Girshman, նշվ. աշխ., pl. 13 (b):

⁵ Տե՛ս О. Хнкикян, Syunik during the Bronze and Iron Ages, Barrington, 2002, էջ 90, pl. LXXXVI (28); R. Girshman, նշվ. աշխ., pl. 74; М. Погребова, Иран и Закавказье в раннем железном веке, М., 1977, էջ 94-95; E. Nergahban, նշվ. աշխ., էջ 17:

⁶ Տե՛ս М. Погребова, նշվ. աշխ., էջ 96-98; Г. Асланов, Р. Вандов, Г. Ионэ, Древний Мингечаур, աղ. XLII (1); L. Vanden Berge, Archéologie de l'Iran Ancien, Leiden, 1959, էջ 125, 135, pl. 130, 154-155, 173; О. Хнкикян, նշվ. աշխ., pl. LXXXIII (15):

4. *Դամբարանից հայտնաբերված խեցեղենը* (սափորներ, միակցված անոթներ, արարողակարգային գավաթներ) ունի բազմաթիվ գուգահեռներ Անդրկովկասում, սակայն դրանք ավելի շատ առկա են Սյունիքում և Արցախում: Խեցեղենի ձևերի (միակցված անոթներ) և հատկանիշների (ուռուցիկ իրան, լայն հարթ հատակ, փոքրիկ շրջանաձև կանթեր) գուգահեռները բազմաթիվ են իրանական նյութում (Հասանլու, Սիակ B)⁷:

5. Դամբարանում հայտնաբերված խեցեղենի մեծ մասը՝ արձանիկը, կենդանակերպ անոթը, հարուստ է կետային եղանակով կատարված եռանկյունիներով, ինչպես նաև դռնաձև եղանակով կատարված սոլյար զարդանախշով: Նմանատիպ զարդանախշը Հայաստանի հուշարձաններում հայտնի է մ.թ.ա. II հազ. վերջից, I հազ. սկզբից (Դիլիջանից և Գոլովինոյից հայտնաբերված գրահաշապիկների վրայի վահանակները)⁸, լայնորեն տարածված է եղել

մ.թ.ա. VIII-VII դդ. (Էրեբունի, Լոռի-բերդ, Հարժիս, Շիկահող, Տանգավեր)⁹: Սակայն կոմպոզիցիայով առավել մեծն է Մարլիկ-թեփեից հայտնաբերված ոսկե մանյակի զարդանախշը¹⁰: Հաջորդ զարդաձևը՝ եղևնաձև զարդանախշը, լայնորեն տարածված է ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Մերձավոր Արևելքում: Անդրկովկասյան և իրանական բազմաթիվ գուգահեռներ ունենալ կենդանակերպ բռնակները:

Հաշվի առնելով վերը ներկայացվածը, կարելի է ենթադրել, որ մ.թ.ա. VI դ. Սյունիքի և Արցախի մշակույթը զարգացել է տեղական հիմքի վրա՝ այնուամենայնիվ կրելով հարևան Իրանի մշակույթի ազդեցությունը, և ձևավորվել է որպես մշակույթի տեղային տեսակ, որը բնորոշվում է ինչպես քաղման ծեսով, այնպես էլ նյութական մշակույթում արտահայտվող առանձնահատկություններով:


Ա. Վ. ԳՆՈՒՆԻ

⁷ Տե՛ս **И. Карапетян**, Материальная культура Армении в VI-IV вв. до н. э., Ер., 2003, էջ 38; **Օ. Хнкикян**, նշվ. աշխ., pl. LXXIX-LXXXVII; **Г. Асланов, Р. Ваидов, Г. Ионз**, նշվ. աշխ., աղ. XLI (2); **R. Dayson**, Problems of protohistoric Iran as seen from Hasanlu. JNES, vol. XXIV, №3, p. 206, pl. XXXVIII:


⁸ Տե՛ս **С. Есаян**, Доспех древней Армении, Ер., 1986, աղ. XXI (4), XXIV (2):

⁹ Տե՛ս **С. Ходжаш, Н. Тухманова, К. Оганесян, Эребуни, М.**, 1979, աղ. 119-111; **С. Деведжян**, Лори-берд I, Ер., 1971, 64-65, նկ. 23 (6); **Օ. Хнкикян**, նշվ. աշխ., pl. XXXII (2-5), LXXXIII (15), LXXXVI (28):


¹⁰ Տե՛ս **Е. Nergahban**, նշվ. աշխ., էջ 18, նկ. 13:




Նկ. 1




Նկ. 2




Նկ. 3




Նկ. 4




Նկ. 5




Նկ. 6




Նկ. 7




Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11